ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լ. ԱՃԵՄՅԱՆ

ՆՎԱՐՍԱԿԻ ԴԱՇԻՆՔԸ

Վարդանանց պատերազմը առանց եզրակացության պիտի մնար, եթե սկսված գործը շարունակվեր և ձեռք չբերվեր Նվարսակի դաշինքը։

451 թվի Ավարայրի ճակատամարտը վերջացավ անորոշ եզրակացությամբ։ Իրավ է թե պարսիկները, շնորհիվ իրենց թվական գերազանցության, տեր մնացին ռազմադաշտին, սակայն հայոց ուժը չխորտակվեցավ, Վարդանի քաջամարտիկ համհարզները, այդ կռվեն հետո, քաշվեցան երկրի լեռնային, անառիկ վայրերը և շարունակեցին պայքարը պարտիզանական կռիվներու ձևին տակ, որ հայ ռազմական արվեստի նախընտրած մեթոդն էր, համապատասխան մեր անբավարար ուժին և մեր երկրի բնական հարմարություններուն։

Ազգային առաջին ապստամբության գործը շարունակվեցավ 33 տարի։ Հազկերտ երկրորդ և անոր հաջորդ Պերոզը, իրավ է թե ժամանակ մը հաշտարար քաղաքականության հետևելով, փորձեր էին հայոց սիրտը սիրաշահիլ մեր երկիրը հնազանդության մեջ պահելու և անոր ընծայած բարիքներեն օգտվելու նպատակով, սակայն այդ քաղաքականությունը անկեղծ չէր։ Հայերը լավ համոզված էին ատոր։ Հազկերտ և Պերոզ փոքր ազգերը ձուլելու սասանյան հին քաղաքականության արտաքին ձևը միայն փոխած էին, փոխանակ բռնի միջոցներու, խաղաղ ձևերով կջանային հասնիլ հետապնդված նպատակին։— Կքաջալերեին ուրացողները, պաշտոններ ու պատիվ կընծայեին անարժեք ու վատ նկարագրով մարդոց և ընդհակառակը կանպատվեին արժանավորներն ու հայրենասերները։ Այս անարգ քաղաքականությունը այն հետևանքը ունեցավ, որ հայ ժողովուրդի բարոյական դիմագիծը սկսավ խաթարվիլ, խախտեցավ միաբանությունը, վերստին արծարծվեցան հին վեճերը, դարձյալ ստեղծվեցան ուխտապահներու և ուրացողներու կուսակցություններ։

Ժամանակը կստեղծե հարմար մարդը։ Եվ տրամադրություններու այս լարված վիճակին մեջ է ահա, որ ասպարեզի վրա կհայտնվի Վահան Մամիկոնյանը՝ Վարդանի եղբոր՝ Հմայակի որդին, որու կյանքն ու գործունեությունը այնքան գրավիչ կերպով տված է մեզ իր կենսագիրը՝ ճշմարտապատում Ղազար Փարպեցին։ Վահան, շնորհիվ իր մորմեն ստացած խնամոտ դաստիարակության, լիովին սեփականացուցած էր Մամիկոնյան տոհմը բնորոշող հատկությունները—քաջասրտություն, անհողդողդ կամք։ Ան գիտեր նաև իր տոհմին հատուկ ավանդությունը—սեր դեպի հայրենի երկիրը, դեպի անոր ազատությունները, դեպի լուսավորությունը և մայրենի Եկեղեցին։ Ահա ինչ զենքերով զինված ան ասպարեզ նետվեցավ, իր շուրջ ունենալով բուռ մը քաջեր միայն և տակավաթիվ քաղաքական գործիչներ—Գյուտ կաթողիկոսը, Կամսարական եղբայրները և ուրիշներ։

482, 483 և 484 թվականները եղան մանավանդ ռազմական բուռն գործունեության տարիները— ազգային երկրորդ ապստամբության տարիները, առաջինը ըլլալով Վարդանանց ստեղծած շարժումը, վերջացած Ավարայրի դյուցազնամարտով։ Ակոռի՝ Մասյաց լեռան ստորոտը, Ներսեհապատ՝ Ատրպատականի մեջ, մերձ Ավարայր դաշտին, Ճարմանա՝ Վրաստանի մեջ, Կուռ գետի ափին, Երեզ և Շտե՝ հունական բաժին Հայաստանի մեջ, Արշարունյաց գավառին

մեջ,— ահա Վահանի մղած կռիվներուն գլխավոր վայրերը, որոնք Հայաստանի մեծագույն մասը կընդգրկեն և կհանդիսանան հայկական պարտիզանական կռիվներու դասական օրինակներ, բացի Ճարմանայեն, որ հայոց համար դժբախտ վերջավորություն մը ունեցավ, առանց որ ատոր մեջ Վահան ամենափոքր հանցանքն ունենար։

Վահանի հաղթությանց պատճառնե՞րը, որոնք «ամենայն աշխարհն արեաց» հիացուցին իր վրա։ Թվական գերազանցություն չունեցավ ան բնավ։ Հայոց «բարեկամներ»ը չօգնեցին իրեն, իսկ հայ նախարարներեն շատերը կամ չեզոք մնացին և կամ Թշնամիին հետը եղան։ Սակայն Վահան միշտ իրեն հետ ունեցավ մեկ զորավոր դաշնակից— Թշնամի զորավարներուն թերությունները, այն «անհանդարտ» զորավարներուն, որոնք օր առաջ հաղթելու, շուտով փառավորվելու և փառավորելու համար «Արքայից Արքայի թագն և արյաց փառքը», երբեք չգիտցան օգուտ քաղել իրենց թվական գերակշռութենեն և անդադար հետապնդելով Վահանը, թափանցեցին Հայաստանի ներսերը, իրենց դեմ արդար զայրույթով լցված բնակչության մեջ և ջլատեցին իրենց ուժը։ Վահան գիտցավ օգտվիլ հակառակորդի այդ անմիտ տակտիկայեն, և իր արագ ու ճապուկ շարժումներովը լրացնել իր բանակի թերիները։ Վահանի ռազմական ոճը եղավ միշտ խուսափիլ բաց ճակատ տալե Թշնամիին, թողուլ, որ ան տարածվի երկրի ներսերը, ցրվե իր ուժերը և հարմար բոպեին, հարմար վայրին վրան նետվելով, շփոթ ձգել անոր շարքերուն մեջ և ջանալով ոչնչացնել անոնց գլխավորները։ Երեզի կռվի միջոցին, խաբելու համար Թշնամիները, Վահան անոնց առջև շարեց ձեռքերնին սուր ու նիզակ բռնած պարզ շինականներ, իբր թե անոնք կանոնավոր զինվորներ եղած ըլլային, իսկ ինքը, առանց նկատվելու, հանկարծ Թշնամիին վրա սլացավ և փառավոր հաղթանակ մը շահեցավ։

Մեր պատմության փայլուն էջերեն մեկն է, սակայն, Շտեի կռիվը, ուր Վահան, իր փոքրաթիվ ընտիրներովը, մեծ հաղթանակ մը տարավ 4.000-նոց պարսիկ բանակին վրա։ Թշնամիին կորուստը այնքան մեծ եղավ, որ պարսիկ հրամանատարը՝ Շապուհ Միհրանյան, այլևս չհամարձակեցավ «մնացած սակավներովը»,— բառերը Շապուհինն են,— նոր ճակատ բանալ հայոց դեմ։ Մանավանդ որ, այս կռվին մեջ իր մահը գտած էր Գթիհոն Սյունի ուրացող հայ նախարարը, որ Շապուհի աջ բազուկն էր և կսիրեր հոխորտալ ըսելով. «Ես Վահանի և բոլոր այդ հայոց հետ ոչ թե նետով կկռվիմ, այլ նետիս կոթովը բոլորն ալ կցրվեմ»։ Այս պատերազմի մասին պարսիկ հրամանատարը քանի մը օր հետո պիտի ըսեր Պերոզի հաջորդին և բոլոր մեծամեծներուն, թե «իր մտքեն երբեք չելլեր հայոց քաջերուն ազդած սարսափը, որոնք մանգաղի ու գերանդիի պես հնձեցին իր բովանդակ գունդը, սրե անցնելով այնչափ ականավոր և քաջ պարսիկ մարդիկ, շատ ժամեր թևակից երթալով իր գունդի մոտեն»։ Ավելի մեծ եղավ Շապուհի վիշտը, երբ ճակատին երկրորդ օրը, հատուկ պատգամավորի միջոցով հանկարծ լուր ստացավ, թե պարսիկ բանակը ահավոր պարտություն է կրեր և ուր սպանված են «աստվածանման» Պերոզը և մեծամեծները։

Արդարև, աղետալի վերջավորություն ունեցած էր այդ պատերազմը։ Զորքը, կորուընցուցած ամեն ինչ, խույս տված էր ռազմադաշտեն, Թշնամիին թողլով մեծ թվով գերիներ, նույնիսկ թագավորին աղջիկը, որ հեփթաղներու թագավորը իր հարեմը մտցուցած էր։ Ուստի անհապաղ Պարսկաստան կկանչվեր Շապուհ զորավարը Հայաստանեն, ինչպես նաև Զառմիհր Հազարավուխտը՝ Վրաստանեն։ Հեփթաղներու հարվածին տակ արագ կործանման կմոտենար Պարսկաստանը, սակայն հինավուրց կայսրության քայքայման առաջքը առավ նույն Զառմիհրը, հաջողելով ծանր գնով հաշտություն կնքել հաղթական Թշնամիին հետ և գահ բարձրացնելով Պերոզի որդին Վաղարշը, «բարերար և հեզ» ըստ Փարպեցիի, մոգերու և ազնվականներու ազդեցութենեն ապատ երկիր կառավարելու կուսակից։

Թագադրության երկրորդ օրն իսկ, խոսք բանալով Հայաստանի մասին, հայոց հետ գործ ունեցող նախարարները՝ Զառմիհր Հազարավուխտն ու Շապուհը, հասկցուցին նոր թագավորին, թե Պերոզի քմահաճույքն ու անմիտ բռնություններն են եղած հայոց ապստամբության պատճառները և թե Վահանը կռված է պարսից դեմ մեծ քաջությամբ։ «Եթե հայոց աշխարհի պես մեծ և պիտանի երկիր մը, և հայոց պես քաջ մարդիկ,— կըսեր Շապուհը,— մեզմե ապստամբած չըլլային, այսչափ աղետներ մեզ պիտի չհարվածեին»։ Ու խորհրդակցության հետևանքը կըլլա այն, որ կորոշվի զիջողական քաղաքականության հետևիլ հայոց հանդեպ։ Հայաստան կուղարկվի Նիխոր Վշնասպ խաղաղասեր իշխանը, Վահանի պահանջները իմանալու և համաձայնություն ձեռք բերելու համար։ Բանակցությունները կկատարվին Հեր և Զարևանդ գավառի Նվարսակ գյուղին մեջ։ Ի պատիվ Վահանի, Նիխոր

կարքե փառավոր ճաշկերույթ, որու ընթացքին, պատմագրի վկայությամբ, հայ ուխտանենգները դուրս կանգնած մնացին ամոթահար,— իբր օրինակ հետագա ժամանակներու ուրիշ կարգի ուխտանենգներու կարծես,— և կկնքվի խաղաղության դաշինը, որ հետո կվավերացվի արքունի գրով և կնիքով, 484 թվականին։ Ստորագրելով այս կարևոր վավերաթուղթը, Արյաց Արքայի փոխանորդը հանձն կառներ հայերուն խողով իրենց հայրենի և ընիկ օրենքը (կրոնք), հայ մարդուն մոգ (զրադաշտական) շղարձնել և հավատափոխության համար պարգևներ ու աստիճաններ չտալ։ Հանձն կառնե ատրուշանները հեռացնել հայոց աշխարհեն և թույլ չտալ, որ ուրացող և վատ մարդիկ անարգեն ու թշնամանեն Հայոց Եկեղեցին։ Քրիստոնեությունը ազատ և համարձակ պիտի պաշտվեր ամեն տեղ։ Մարդիկը պիտի ճանչցվեին ոչ թե համաձայն իշխանավորի քմահաճույքին, այլ արդարությամբ որոշելով թե ո՛րն է լավն ու վատը, պիտանին և անպետը։ Լավերն ու օգտակարները պիտի վարձատրվեին և առաջ քաշվեին, իսկ վատերն ու անպիտանները՝ արհամարհվեին։ Կխոստացվի իմաստուն մարդոց խորհրդով գործ տեսնել և անմիտները մոտ չթողուլ և հալածել։ Արյաց աշխարհի տերը (արքան) պետք էր տեսներ ամեն ինչ ի՛ր աչքով, լսեր ի՛ր ականջով և խոսեր ի՛ր բերանով։ Իր և հայ ժողովուրդի միջև միջնորդներ պետք չէր ըլլային, ուրիշներու աչքով պիտի չտեսներ, նաև ուրիշի ականջով պիտի չլսեր, ուրիշի խոսքով պիտի չճանչնար լավ և վատ մարդիկ և ուրիշի բերանով պիտի չխոսեր ինչ որ հարկավոր էր, այլ ինքը պետք էր ըլլար վերահասու, անմիջական հարաբերություններ ունենար մարդոց հետ։ Իսկ այս բոլորին փոխարեն, Վահան հանձն կառներ զենքը վար դնել, Արքայից Արքան օրինավոր տեր ճանչնալ և Հայաստանը վերստին պարսկական տիրապետության տակ դնել։ Այս փոխադարձ հատուցման օրն էր, զոր Նիխոր «աստվածներեն խնդրեր էր, որ տեսնելու արժանի ընեն զինքը»։

Հասկնալու համար Նվարսակի դաշինքին կարևորությունը, պետք է աչքի առջև բերել այն ժամանակվա աշխարհի վիճակը։ Ասիա կհեծեր արևելյան բռնապետներու կրունկին տակ, ու ոչ մեկ ժողովուրդ կհամարձակեր իրավունքի, մարդկային ազատություններու խոսքն ընել։ Եվրոպական արդի մեծ ազգերը՝ Ֆրանսա, Անգլիա, Գերմանիա, բարբարոս վիճակ մը կապրեին, անգիտակից կրոնական և քաղաքական իրավունքներու գաղափարին։ Հայաստան եղավ այն երկիրը, որ առաջին անգամ պարտավորցուց իր օտար վեհապետը՝ ճանչնալու մարդկային տարրական իրավունքերը, ընդ որս և խղճի ազատությունը։ «Եթե խղճի ազատությունը կընդունիք,— ըսած էր Վահան Մամիկոնյան Նիխորի պատգամավորներուն,— կհաշտվինք ձեզի հետ և դարձյալ կհնազանդինք ձեզ, իսկ եթե չեք ընդունիր, պատրաստ ենք մինչև մեր վերջին շունչը կռվելու...»։

Իր եռամյա անօրինակ կռիվներովն ու Նվարսակի դաշինքովը, Վահան եզրակացության մը հասցուցած եղավ Վարդանանց սկըսած մեծ շարժումը։ Ավարայրի դաշտին վրա, 451 թվականին բացված հաշիվը քսաներեք տարի հետո Նվարսակի մեջ փակվեցավ ի շահ հայերու։

Ինչպես հայտնի է, Պերոզ բազմաթիվ անգամներ իր մեծամեծներու ներկայությանը նախատած էր հայերը։ Նվարսակի դաշինքը, մաքրելե հետո նախատինքի այս մուրը հայոց ճակատեն, Վահան քիչ հետո առիթ ունեցավ ցուցնելու որոնց որ պետք էր, թե ո՛ր գունդն էր անվանին և լավը։— Վաղարշի եղբայրը՝ Զարեհ ապստամբած էր իր եղբորը դեմ, կամենալով ինք ժառանգել հոր գահը։ Ցույց տալու համար իր հավատարմությունը Արյաց Արքային, Վահան, Նիխորի խնդրանքով Վրեն Վանանդեցիի գլխավորությամբ հայկական ձիավոր գունդ մը ուղարկեց Վաղարշի օգնության։ Շուտով Զարեհ պարտվեցավ ու գերի իյնալով, հրապարակի վրա մորթվեցավ։ Այս ճակատամարտին մեջ Երևելի հանդիսացած էր Վահանի եղբոր որդին՝ Գրիգորը։ Այս դեպքեն հետո է, որ Վահան Վաղարշին այցելեց և այնքան մեծ պատիվներու արժանացավ, իսկ տարի մը հետո ալ Հայաստանի մարզպան նշանակվեցավ։

Վարդանանց պատերազմի 1.500-ամյակին առթիվ կարժեր անդրադառնալ նաև Վահան Մամիկոնյանի գործին և Նվարսակի պատվաբեր դաշինքին, որուն փառքը որչափ Սովետական Միության հնագույն ժողովուրդներեն մեկուն, նույնքան և մյուսներուն սեփականությունն է։